Արձանագրություն N 3

Երևանի պետական համալսարանի

2011 թ. մարտի 31-ի գիտական խորհրդի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 104 անդամներից 70-ը:

Խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ.

1. Դոցենտի գիտական կոչման շնորհում:
   (Զեկ.՝ Է. Վ. Չուբարյան, Հ. Լ. Սարգսյան)
2. Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի մասին:
   (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
3. 2011/2012 ուստարվա բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսման վճարների հաստատում:
   (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
4. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
5. 2011/2012 ուստարվա ուսումնական գործընթացի պլանավորման մասին:
   (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
6. 2012թ. «Կովկասագիտություն» մասնագիտությամբ ընդունելություն կազմակերպելու մասին: (Զեկ.՝ Պատմության ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյան)
7. «Ակտուար մաթեմատիկայի ամբիոնի» և «Ակտուար մաթեմատիկա» մասնագիտության վերանվանման մասին: (Զեկ.՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան)
8. Ընթացիկ հարցեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանը հանդես եկավ ներածական խոսքով:

Լսեցին. - Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը:

Մրցութային հանձնաժողովների նախագահներ Է. Չուբարյանի և Հ. Սարգսյանի՝ մասնակիցներին ներկայացնելուց հետո թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ:

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Առաքելյան Սամվել Արշավիրի	Իջևանի մասնաճյուղի տնօրեն, պատմության և քաղաքագիտության ամբ. դոցենտ	պատմ. գիտ. թեկնածու /1995/ Է.00.00 – պատմություն
2.	Մարգարյան Նիկոլ Մերուժանի	մշակութաբանության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2000/ Է.00.00 – պատմություն
3.	Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի	հնագիտության և ազգագրության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2001/ Է.00.00 – պատմություն
4.	Եղիազարյան Կարինե Ալբերտի	հայոց պատմության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2010/ Է.00.01 – հայոց պատմություն
5.	Գևորգյան Կարեն Ալբերտի	Եվրոպական և միջազգային իրավունքի ամբ. ասիստենտ	իրավ. գիտ. թեկնածու /2005/ ԺԲ.00.06 – միջազգային իրավունք
6.	Դավթյան Տաթևիկ Արթուրի	քաղաքացիական իրավունքի ամբ. ասիստենտ	իրավ. գիտ. թեկնածու /2009/ ԺԲ.00.03 – քաղաքացիական իրավունք
7.	Սարգսյան Հասմիկ Ռազմիկի	ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբ. ասիստենտ	քիմ. գիտ. թեկնածու /1993/ Բ.00.04 – ֆիզիկական քիմիա

Քվեարկությանը մասնակցեցին 70 անդամ:

Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Կիրակոսյան Ալբերտ – նախագահ

Ղարիբյան Գրիգոր

Ավետիսյան Համլետ

Մարմարյան Աննա

Կրպեյան Ասպրամ

Դոցենտի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Առաքելյան Սամվել Արշավիրի – կողմ - 52, դեմ - 17 , անվավեր – 1
2. Մարգարյան Նիկոլ Մերուժանի – կողմ - 64 , դեմ - 5 , անվավեր – 1
3. Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի – կողմ - 66, դեմ - 3, անվավեր – 1
4. Եղիազարյան Կարինե Ալբերտի – կողմ - 67, դեմ - 5 , անվավեր – 2
5. Գևորգյան Կարեն Ալբերտի – կողմ - 62 , դեմ - 7 , անվավեր – 1
6. Դավթյան Տաթևիկ Արթուրի – կողմ - 55, դեմ - 13 , անվավեր – 2
7. Սարգսյան Հասմիկ Ռազմիկի – կողմ - 64, դեմ - 6, անվավեր – 0

Որոշեցին. –1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

2. Վերոհիշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:
3. 15 օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել բոհ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ շնորհելու համար:

2. Լսեցին.- Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի մասին:
(Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին. - Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2011-2012թթ.) հաստատել:

3. Լսեցին. - 2011/2012 ուստարվա բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսման վճարների հաստատում:
(Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)

Որոշեցին. – Հաստատել 2011/2012 ուստարվա բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների:

4. Լսեցին. -Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

Որոշեցին. - Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը

հաստատել:

5. Լսեցին.- 2011-2012 ուստարվա ուսումնական գործընթացի պլանավորման մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյան)

Որոշեցին.- 1. 2011-2012 ուստարվանից ամբիոնային բեռնվածությունների մեջ ներառել նաև հեռակա ուսուցման բակալավրիատի 2-5-րդ կուրսերի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի աշխատանքային ուսումնական պլաններով նախատեսված ժամաքանակները:

2. «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներին» համապատասխան ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերի մասնագրերը, ծրագրի ուսումնական մոդուլների նկարագրիչները կազմելու նպատակով ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի յուրաքանչյուր ծրագրի համար նախատեսել որոշակի ժամաքանակ:

6.1. Լսեցին. - 2012թ. «Կովկասագիտություն» մասնագիտությամբ ընդունելություն կազմակերպելու մասին:

Որոշեցին.- Ձեռնարկել անհրաժեշտ քայլերը՝ 2012թ. «Կովկասագիտություն» մասնագիտությամբ ընդունելություն կազմակերպելու մասին:

7.1.
Լսեցին. - «Ակտուար մաթեմատիկայի ամբիոնի» և «Ակտուար մաթեմատիկա» մասնագիտության վերանվանման մասին: (Զեկ.՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան)

Որոշեցին. -

1. **«Ակտուար մաթեմատիկայի» ամբիոնը վերանվանել «Ակտուարական մաթեմատիկայի» ամբիոն:**
2. **Համապատասխան հիմնավորումով դիմել ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, խնդրելով հանդես գալու ՀՀ Կառավարության առջև հետևյալ միջնորդությամբ.**

ա/ 2007թ. հաստատած Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտու-թյունների ցանկում «Ակտուար մաթեմատիկա» մասնագիտությունը վերանվանել

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա»:

բ/ Շրջանավարտներին տրվող որակավորումները վերանվանել՝ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի բակալավր/մագիստրոս»:

Լսեցին. - Ընթացիկ հարցեր:

Ընթացիկ հարցեր

8.1.

Լսեցին. - Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական շեմային պահանջների կիրարկման հետաձգման մասին:

Որոշեցին. -Հաշվի առնելով ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներում «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» (հաստատված ԵՊՀ ԳԽ 2009թ. հունվարի 29-ի թիվ 1 նիստում) հիմնական դրույթների, մասնավորապես բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական շեմային պահանջների վերաբերյալ ոչ լիարժեք իրազեկումը ուսանողության շրջանում՝

1. «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 5.1. և 5.2. կետերի 1-ին և 2-րդ ենթակետերում համապատասխանաբար բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) 9,00 և 12,00 ավարտական շեմային պահանջները կիրարկել 2011/12 ուստարվա ընդունելությունից սկսած:

2. Հանձնարարել ԵՊՀ ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ) ղեկավարներին՝ կրեդիտային համակարգով ուսումնառության կարգի դրույթների վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը մեծացնելու նպատակով ներդնել գործուն մեխանիզմներ և այս ուղղությամբ ակտիվացնել կուրատորների աշխատանքը:

3. Ուսանողների հետ կնքվող պայմանագրերում ավելացնել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական շեմային պահանջների վերաբերյալ համապատասխան իրազեկիչ դրույթներ:

4. Սույն որոշման մասին սահմանված կարգով տեղեկացնել Երևանի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին:

8.2.

Լսեցին.- ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վալերի Բորիսի Պախալովի «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» վերտառությամբ աշխատանքն իբրև լաբորատոր աշխատանքների ուսումնական ձեռնարկ հաստատելու և տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի և Օպտիկայի ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը պատշաճ գիտական մակարդակով գրված ուսումնամեթոդական աշխատանք է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն,

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտին՝ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վալերի Բորիսի Պախալովի «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» վերտառությամբ աշխատանքն իբրև լաբորատոր աշխատանքների ուսումնական ձեռնարկ հաստատելու միջնորդությամբ:
2. ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վալերի Բորիսի Պախալովի «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» վերտառությամբ աշխատանքը երաշխավորել տպագրության:

8.3.

Լսեցին.- 2011-2012 ուստարվանից սկսած հեռակա ուսուցմամբ նախատեսված դասաժամերը ամբիոնային բեռնվածության մեջ ներառելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա.Կ. Գրիգորյան)

Որոշեցին.- 2011-2012 ուստարվանից ամբիոնային բեռնվածությունների մեջ ներառել

նաև հեռակա ուսուցման բակալավրիատի 2-5-րդ կուրսերի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի աշխատանքային ուսումնական պլաններով նախատեսված ժամաքանակները:

8.4.
Լսեցին .- Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիոլոգիայի ամբիոնը»՝ «Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի» վերանվանելու մասին:
(Զեկ.՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյան)

Որոշեցին.-Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիոլոգիայի ամբիոնը» վերանվանել «Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն»: